գ) Երկխոսություններ, մենախոսություններ, զրույց ընթերցողի հետ

Պատմագրության՝ իբրև գրական երկի ցուցիչներից մեկը ***երկխոսությունների*** առատ ու ազատ կիրառությունն է: Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը հատկական է նաև այդ առումով: Նրանում լայնորեն կիրառվում են երկխոսությունների թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի ձևերը[22], հատկապես վկայաբանական հատվածներում: Վերջին պարագան Մայիս Ավդալբեգյանը բացատրում է այդ ժանրի կաղապարներով. «Այնտեղ պարտադիր բանավեճ է գնում տիրող հեթանոսի, մահմեդականի կամ այլակրոնի և քրիստոնյայի միջև»[23]: Զրույցի պարագային ևս երկխոսություններն ունեն ժանրակազմիչ գործառույթ:

---

22 Ցավոք, երկխոսությունների պարագային ևս Դավրիժեցու պատմագրքի աշխարհաբար թարգմանության մեջ (Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988) թարգմանիչը՝ Վարագ Առաքելյանը, հաշվի չի առել ուղղակի և անուղղակի վկայագրված երկխոսությունների տարբերակումը և երբեմն ուղղակին ներկայացրել է իբրև անուղղակի, և հակառակը: Սույն աշխատության խնդրադրության առումով՝ սա ևս կոպիտ միջամտություն է Դավրիժեցու բնագրին:

23 ***Մայիս Ավդալբեգյան,*** Հայ պատմագրության ժանրային մի քանի առանձնահատկություններ, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, էջ 28: